ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 14

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի խորհրդի նիստի 18 մարտի 2014թ.

Նախագահ՝ Ա. Ցուցուլյան

Քարտուղար՝ Հ. Գասպարյան

Ներկա էին խորհրդի 8 անդամներ: Հրավիրվել էին նաև ամբիոնների դասախոսներ և աշխատակիցներ:

ՕՐԱԿԱՐԳ

1. *Ամբիոնի վարիչների հաշվետվություն:*

/զեկ. Մ. Ա. Զաքարյան, Ա. Զ. Ալավերդյան/

2. *ՈՒսանողների բավարարվածության մակարդակը ուսումնառությունից և օժանդակ ծառայությունից:*

/զեկ. Ա. Վ. Ցուցուլյան/

3. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ- Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկան, խորհրդի նախագահ Ա. Վ. Ցուցուլյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Ա. Վ. Ցուցուլյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին հանդես եկավ Բ/Մ և ինֆորմատիկայի ամբիոնի վարիչ Մ. Ա. Ա. Զաքարյանը: Նա ներկայացրեց ամբիոնում կատարված աշխատանքները, որոնք ըստ հաստատված ժամանակացույցի իրականացվել է. ժամանակին կազմվել և տրվել են ուսանողներին ընթացիկ և ամփոփիչ ավարտական քննությունների հարցաշարերը: Կազմակերպվել և անց են կացվել I կիսամյակի ընթացիկ ստուգումներն ու քննությունները, նաև կուրսային աշխատանքների պաշտպանությունը: Ժամանակին և պատշաճ անց է կացվել քննաշրջանը: ՈՒսումնական պրոցեսը կազմակերպվել է դասացուցակի հիման վրա, դասապրոցեսի խաթարում չի եղել, դասաժամերի բաց թողում չի եղել: Ավարտական աշխատանքների կատարումն ավարտին է մոտենում, շուտով կկազմակերպվի նախապաշտպանությունը: Այդ գործընթացում ներգրավվում է նաև մասնագիտության կուրսղեկ Ք. Վ. Օթարյանը: Այժմ անց են կացվում I և II կուրսերի I ընթացիկ քննությունները, իսկ IV կուրսի II ընթացիկ ստուգումները և քննությունները կկայանան 28-29.03.2014թ.: Այնուհետև ամբիոնի վարիչը հույս

հայտնեց, որ դեկանատի հետ համատեղ իրականացվել և իրականացվում են ուսումնական գործընթացին համապատասխան արդյունավետ աշխատանք:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Մ. Ա. Ճաղարյանը, Գ. Վ. Գուլակյանը և ուրիշներ: Նրանք համակարծիք էին ներկայացվածին և առաջարկեցին ամբիոնի կատարած աշխատանքը գնահատել լավ:

Այնուհետև խորհրդի նախագահ Ա. Վ. Ցուցուլյանը ձայնը տալիս է Անտառագիտության ամբիոնի վարիչ Ա. Զ. Ալավերդյանին:

Ա. Զ. Ալավերդյանը ներկայացրեց ամբիոնում իրականացված աշխատանքները կապված ուսումնական պրոցեսի հետ: Նա ևս ներկայացրեց, որ ժամանակին տրվել են ուսանողներին ընթացիկ և ամփոփիչ ավարտական քննությունների հարցաշարերը: Կազմակերպվել և անց է կացվել ընթացիկ ստուգումներն ու քննությունները: Քննաշրջանի արդյունքներով ակադեմիական պարտք ունեցող ուսանող չի գրանցվել: Ուսումնական պարապմունքները անց են կացվում դասացուցակի հիման վրա, դասաժամերի բացթողում չի եղել: Ավարտին է մոտենում ավարտական աշխատանքների կատարումը, շուտով նշանակվելու է նախապաշտպանության օրը: Ղեկավարների հետ հաճախակի է լինում հանդիպումներ, որի գործընթացում ներգրավվում է նաև մասնագիտության կուրսղեկ Է. Կ. Օսիպովան:

IV կուրսի II ընթացիկ ստուգումները և քննությունները կկայանան 25-29.03.2014թ.: Այնուհետև ամբիոնի վարիչը հույս հայտնեց, որ դեկանատի հետ համատեղ աշխատանքը տալիս է իր դրական արդյունքը հաճախումների և ուսումնառության համակարգում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Է. Կ. Օսիպովան, Հ. Ս. Գասպարյանը և ուրիշներ: Նրանք ևս ներկայացրին ամբիոնի ներդրումը ուսումնական պրոցեսում և առաջարկեցին ամբիոնի կատարած աշխատանքը գնահատել լավ:

Այնուհետև ֆակուլտետի խորհրդի նախագահը ներկայացրեց, որ չպետք է սահմանափակվել ձեռք բերածով և առաջարկեց ամբիոնների կատարած աշխատանքները գնահատել լավ:

ՈՐՈՇԵՑԻՆ-1. Բարձրագույն մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոնի կատարած աշխատանքը գնահատել ,,լավ,,:

2. Անտառագիտության ամբիոնի կատարած աշխատանքները գնահատել ,,լավ,,:

Օրակարգի երկրորդ հարցի մասին խորհրդի նախագահ Ա. Վ. Ցուցուլյանը ներկայացրեց ուսանողների բավարարվածության մակարդակը, ուսումնառությունից: ՈՒսանողների հետ իրականացվում է ուսումնական կարգին համապատասխան աշխատանք: Այն յուրաքանչյուր ուսանողի կողմից ընկալվում է տարբեր, այնպես որ դառնում են մասնագետներ՝ համապատասխան ժամանակակից պահանջների: ՈՒսանողները բավարարված են նաև հաստատության օժանդակ ծառայություններից /համակարգչային մասնագիտական, կենսաբանության և քիմիայի լաբորատորիաներ, գրադարան/,

որոնք պատրաստակամ են ուսանողների ցանկացած հարցերին պատշաճ պատասխան տալու:

ՈՐՈՇԵՑԻՆ-1.Ավելի ակտիվացնել ուսանողների և օժանդակ ծառայությունների կապը:

Օրակարգի երրորդ հարցի մասին ֆակուլտետի խորհրդի նախագահը ներկայացրեց ներֆակուլտետային գործընթացին վերաբերող ընթացիկ հարցերի մասին: Նա հիմնականում ներկայացրեց, որ կապված ֆակուլտետում մասնագիտությունների փոփոխման հետ անհրաժեշտ է լուծարել «Ընդհանուր ֆիզիկայի» ամբիոնին պատկանող «Ռենգենյան հետազոտությունների գիտաուսումնական» լաբորատորիան:

Ներկայացված նյութի վերաբերյալ անցկացվեց մտքերի փոխանակություն և առաջարկեցին հաստատել:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ներկայացնել տնօրենություն լուծարելու «Ռենգենյան հետազոտությունների գիտաուսումնական» լաբորատորիան:

ՆԱԽԱԳԱՀ **Ա. Վ. ՑՈՒՑՈՒԼՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ **Հ. Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ**